

Գրանցված է ԼՂՀ արդարադատության
նախարարությունում «26» հունվարի 2016 թ.
Պետական գրանցման համար 1111611
ԼՂՀ արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» հունվարի 2016 թ.

N 5-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ^{*)} օրենքի 20.2-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել հարկ վճարողների հավաստագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Համակարգչային ծրագրերի մշակման և սպասարկման բաժնին՝ ապահովել հավաստագրերի տրամադրման ծրագրային մշակումն ու ամփոփումը:

3. Տրամադրված հավաստագրերի վերաբերյալ տեղեկությունների ամփոփումը վերադաս հարկային մարմնում վերապահել կազմակերպական ^{*)} և եկամուտների հաշվառման վարչությանը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը դնել *հետաքննության և^{*)}* օպերատիվ հետախուզության վարչության վրա:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկերի մասին» ^{*/} օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված՝ սկսնակ հարկ վճարողներին հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրման կարգի հետ կապված հարաբերություններն ու պայմանները:

II. ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2. Հարկ վճարողները հավաստագիր ստանալու համար թղթային եղանակով հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում՝

1) դիմում հավաստագիր ստանալու մասին՝ համաձայն N 1 ձևի.

2) հայտարարություն «Հարկերի մասին» ^{*/} օրենքի 20.2-րդ հոդվածի պահանջները բավարարելու մասին՝ համաձայն N 2 ձևի:

3. Հարկ վճարողները հավաստագրման համար պարտավոր են դիմել մինչև գործունեություն սկսելը:

4. Հաշվառման վայրի հարկային մարմինը դիմումի ստացման օրվա ընթացքում ուսումնասիրում է դիմումն ու կից ներկայացված փաստաթղթերը և թերություններ չհայտնաբերելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողին տրամադրում հավաստագիր՝ համաձայն N 3 ձևի:

Փաստաթղթերը ամբողջական չլինելու դեպքում հաշվառման վայրի հարկային մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է հարկ վճարողին:

5. Հարկ վճարողը կարող է վերացնել հայտնաբերված թերությունները և փաստաթղթերը գրավոր ներկայացնել հաշվառման վայրի հարկային մարմին:

6. Հավաստագիրը տրամադրվում է պատշաճ ձևով՝ առձեռն՝ ստացականով կամ պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ:

7. Հաշվառման վայրի հարկային մարմինը հարկ վճարողներին տրամադրված հավաստագրերի մասով վարում է էլեկտրոնային գրանցամատյան՝ համաձայն N 4 ձևի:

8. Հավաստագրի տրամադրման մերժումը և գործողության դադարեցումն իրականացվում է բացառապես «Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով:

9. Հավաստագրի գործողության ընթացքում «Առևտրի հարկի մասին» ^{*1)} օրենքով սահմանված՝ առևտրի հարկով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը 30 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հարկ վճարողը պարտավոր է հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել դիմում հավաստագրի գործողության փոփոխության կամ դադարեցման մասին՝ համաձայն N 5 ձևի:

Դիմումը ներկայացվում է մինչև տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար առևտրի հարկի հաշվարկի ներկայացումը, բայց առևտրի հարկի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ:

10. Դիմումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման վայրի հարկային մարմինը տեղեկատվական բազայում կատարում է համապատասխան փոփոխություն կամ դադարեցնում հավաստագրի գործողությունը:

10.1. Հավաստագրի գործողության ընթացքում գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու դեպքում հարկ վճարողը կարող է հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել դիմում՝ հավաստագրի գործողության կասեցման համար՝ վերադարձնելով հավաստագրի իր օրինակը:

10.2. Դիմումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման վայրի հարկային մարմինը տեղեկատվական բազայում կասեցնում է հավաստագրի գործողությունը՝ դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից մինչև հավաստագրով ներառված ժամկետի ավարտը:

10.3. Սույն կարգի 10.1-ին կետում նշված հարկ վճարողները գործունեությունը վերսկսելիս առնվազն մեկ աշխատանքային օր առաջ դիմում են ներկայացնում

հաշվառման վայրի հարկային մարմին՝ հավաստագրի գործողությունը կասեցումից հանելու նպատակով:

10.4. Դիմումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման վայրի հարկային մարմինը նախորդ հավաստագրում ներառված՝ արտոնությունից չօգտված ամիսների համար հարկ վճարողին տրամադրում է նոր հավաստագիր:^{*1)}

11. Հաշվառման վայրի հարկային մարմինը յուրաքանչյուր օրվա ընթացքում տրամադրված հավաստագրերի վերաբերյալ գրանցամատյանում գրառված տեղեկությունները էլեկտրոնային եղանակով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է *հետաքննության և*^{*1)} օպերատիվ հետախուզության վարչությանը:

12. *Հետաքննության և օպերատիվ*^{*1)} հետախուզության վարչությունը «Հարկերի մասին»^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքերի ճշտման նպատակով հնգօրյա ժամկետում ուսումնասիրում է տրամադրված հավաստագրերի վերաբերյալ ներկայացված տեղեկությունը և խախտումներ չհայտնաբերելու դեպքում գրավոր տեղեկացնում հաշվառման վայրի հարկային մարմնին: Խախտումներ հայտնաբերելու դեպքում *հետաքննության և*^{*1)} օպերատիվ հետախուզության վարչությունը *Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին*^{*1)} է ներկայացնում եզրակացություն՝ հավաստագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ:

13. *Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին*^{*1)} կողմից կայացվում է որոշում՝ հարկ վճարողին փոխկապակցված ճանաչելու մասին, եթե ներկայացված եզրակացությամբ հիմնավորվում է, որ առկա են բավարար հիմքեր փոխկապակցված անձանց կողմից ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

14. *Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին*^{*1)} որոշմամբ փոխկապակցված համարված անձանց որոշման պատճենի հանձնումն իրականացվում է հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից՝ որոշումն ընդունելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Որոշման պատճենը հանձնվում է պատշաճ ձևով՝ առձեռն՝ ստացականով կամ պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Հարկ վճարողը որոշման պատճենը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է հետ վերադարձնել հավաստագրի իր օրինակը:

15. Հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից հարկ վճարողին փոխկապակցված ճանաչելու մասին որոշման հիման վրա մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվական բազայում կատարվում է հավաստագրի գործողության դադարեցում:

**ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ
ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը

2. Իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) բնակության հասցեն _____

3. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը

4. Գործունեության տեսակների մանրամասն նկարագրությունը

Կից ներկայացվում է «Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածի պահանջները բավարարելու մասին հայտարարություն:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ և երաշխավորում, որ այն համապատասխանում է *Արցախի Հանրապետության օրենսդրության* ^{*1)} պահանջներին:

տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) ստորագրությունը, անունը, ազգանունը

_____ 20 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ («Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածի պահանջները բավարարելու մասին)	Փաստաթղթի հերթական համարը՝ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը և ազգանունը	
Պետական գրանցման (հաշվառման) համարը	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Գտնվելու (բնակության) վայրը	

Սույնով հայտարարում եմ, որ՝ _____
իրավաբանական անձի անվանումը կամ

_____ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը և ազգանունը

1) չի ստեղծվել այլ հարկ վճարողի վերակազմակերպման արդյունքում կամ այլ հարկ վճարողի դուստր ընկերություն չէ.

2) չի հաշվառվել գործունեության դադարեցումից հետո և չի գործում նախկինում տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարի ներքո.

3) կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի սեփականատերը չունի այլ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժին (բաժնետոմս, բաժնեմաս), որը դիմումի ներկայացման պահին իրականացնում է նույնատիպ գործունեություն.

4) *Արցախի* ^{*1)} Հանրապետության տարածքից դուրս գործունեություն չի իրականացնում.

5) մինչև սույն հայտարարության ներկայացումը չի իրականացրել որևէ տեսակի ձեռնարկատիրական գործունեություն.

6) «Առևտրի հարկի մասին» ^{*1)} օրենքով սահմանված՝ առևտրի հարկով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը հավաստագրի գործողության ժամկետում 30 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում պարտավորվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար առևտրի հարկի հաշվարկի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ սահմանված ձևով տեղեկացնել հաշվառման վայրի հարկային մարմնին.

7) տեղյակ է, որ «Հաստատագրված վճարների մասին» ^{*1)} օրենքի 7-րդ հոդվածի «գ.1», ^{*1)} «ժգ», «ժդ» «ժդ¹», «ժէ» և (կամ) «ժը» կետերով գործունեության իրականացման մասով «Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված արտոնությունը չի գործում:

_____ տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը, ազգանունը, ստորագրությունը

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե^{*1)}**Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր N _____****(հարկային արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ)**

Տրված «_____» _____ 20 թ.

Սույն հավաստագիրը տրվում է

իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը, ազգանունը

պետական գրանցման (հաշվառման) համարը

հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) և ամսաթիվը

գտնվելու (գործունեության) վայրը

և հավաստում է այն մասին, որ

«_____» _____ 20 թ.-ից մինչև «_____» _____ 20 թ.-ը ազատվում է
(հավաստագրի գործողության ժամկետը)առևտրի հարկի վճարումից (30 000 000 ՀՀ դրամ իրացման շրջանառությունը
չգերազանցող մասով) հետևյալ առևտրական գործունեության տեսակ(ներ)ի մասով՝

_____ .

հաստատագրված վճարի վճարումից հետևյալ գործունեության տեսակ(ներ)ի մասով՝

_____ .

արտոնագրային վճարի վճարումից հետևյալ գործունեության տեսակ(ներ)ի մասով՝

_____ :

Սույն հավաստագիրը տրված է «Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 20.2-րդ հոդվածի հիման
վրա:

Դիմում՝ «_____» _____ 20 թ. N _____

Հաշվառման վայրի հարկային մարմնի
ղեկավար

(ստորագրությունը)

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[illegible]

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Տեղեկացնում

եմ,

որ

իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը, ազգանունը

«___» _____ 20 թ. տրված N _____ հավաստագրի գործողության ընթացքում առևտրի հարկով հարկվող շրջանառությունը գերազանցել է 30 000 000 ՀՀ դրամը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում եմ «___» _____ 20 թ. փոփոխել կամ դադարեցնել հավաստագրի գործողությունը:

տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) ստորագրությունը, անունը, ազգանունը

_____ 20 թ.

*1) ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 08.11.2021թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 11-ի N 5-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 252-Ն հրամանի խմբագրությամբ